Արձանագրության 6

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/7» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12.03.2020թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հարությունյան, Ա. Սարգսյան, Կ. Հարությունյան, Ռ. Աբրահամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ներսիսյան

1. **«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/7» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին**

(Ա. Կիրակոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 25.02.2020 թվականին «Շինկենտրոն» ՓԲԸ-ին /այսուհետև Ընկերություն/ ներկայացվել էր «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/7» ծածկագրով Երևան քաղաքի «Հաղթանակ» զբոսայգու հարավային հատվածի և իրեն կից տարածքներում (Սարալանջ) անտառապաշտպանիչ գոտու ստեղծման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերությունը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 10.03.2020 թվականը/ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման ապահովումը և պայմանագրի ապահովումը, որը Ընկերության կողմից չի տրամադրվել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Ընկերությունը համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ **եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը** կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա. որոշեց նիստը կասեցնել, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված, երրորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին, 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 2020 թ.-ի **մարտի 18-ին ժամը 11:00-ին Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1, 321 սենյակ) հասցեում**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Կիրակոսյան
Անդամներ՝		Ա. Հարությունյան
		Ա. Սարգսյան
	ԲԱՑԱԿԱ	Կ. Հարությունյան
	ԲԱՑԱԿԱ	Ռ. Աբրահամյան
Քարտուղար՝		Ա. Ներսիսյան